

Զորք օձը այդ բանը լայնում է տեսչին: Տեսուչ Զիլիկիսեանը առաջուց տրդէն դրդուած լինելով իրեն ծաղրող ուսուցչի, Պ. Գալիկեանի գէտ, սկսում է գրգռել իրեն համախոհ վերակացին և մի ուրիշ ուսուցչի, որպէս զի շաբաթ օրը մի լաւ ծենեն ու: Գալիկեանին: Ուստի շաբաթ օրը երեք դասերից յետոյ, երբ Գալիկեանը պարսպում էր իւր բնախօսական դասով բարձրագոյն դասարանի աշակերտներին հետ, տեսուչը ծառայէն ուղարկում է նորա մօտ տնելով պաշտօնական գրութիւն կայ, թող գալ և ստորագրէ: Պ. ուսուցչիցը նախ ընդդիմանում է, բայց երբ ծառան երկրորդ տնգամ է կանչում, այն ժամանակ գնում է տեսչանոցը և խնդրում ցոյց տալ գրութիւնը: Տեսուչը նախ խօսք է խառնում, յետոյ դառնում է անելով:

---Չորեքշաբթի օրը գիշերւան դռն էիր ինձ ծաղրում:

---Այդ ով ասաց քեզ, մէկէ դուք լրտեսներ ունիք, հարցնում է զարմացած ուսուցիչը:

---Այ՛ քեզ... գոչում է տեսուչը և մի ապակի իջեցնում նորա երեսին:

Եւ մինչդեռ նա «օգնութիւն» էր աղաղակում, ներս են մտնում վերակացուն և խաչատրեանը: Վերակացուն փոխանակ օգնելու, բռնում է նորա գլուխը և կանակի տակ գնելով սկսում է բռնանքով խփել: Խաչատրեանը աքացիով է օգնում վերակացին իսկ տեսուչը չի դադարում մուշտիներ իջեցնելուց խեղճի գլխին և մէջքին:

Բաւական ծեծ ուտելուց յետոյ, զըպրոցի ծառայի միջամտութեամբ, Գալիկեանը ազատւում է նրանց ձեռքից և զիմում է ուղղակի դէպի առաջնորդարան և յայտնում եղելութիւնը:

Յաջորդ օրը հոգաբարձութիւնից մի որոշ պատահական չքստանալով, նա պատրաստում է մի խնդրագիր և ներկայացնում ուսուսաց հիւպատոսին, որով յայտնում է եղելութիւնը և արդար դատատան պահանջում:

Հիւպատոսը իւր կողմից գիմում է հոգաբարձութեան և պահանջում պատժել յանցաւորներին: Հոգաբարձութիւնը գործը լաւ քննելուց յետոյ վճռում է արտաքսել տեսչին, Գալիկեանին և խաչատրեանին և անմիջապէս իրենց որոշումը յայտնում են իշխալ անձանց: Իսկ վերակացուն շնորհիւ հայր սուրբի ջերմ պաշտպանութեան մնում է իւր պաշտօնի մէջ:

Զիլիկիսեանը, այդ պաշտօնագուրկ տեսուչը լուսավոր ուր կարող է իրաւայի զըպրոցում պաշտօն ստանձնել, սկսել է սիլի--բիլի անել այդ գործի խմբի հետ: Իսկ մենք խորհուրդ կտանք այդ պարտին հեռանալ քաղաքիցս, եթէ չէ ուզում առաւել ևս խայտառակել:

Վնչ քեզ, զայրոց, որ ամեն մի համբակ հոք է կոխում քո սուրբ շէմքի վրայ և քո ոտները դաստիարակն է լինում: Եւ այն ժամանակ լինում ես ոչ թէ զըպրոց, այլ շաբաթորենի որջ:

Թանգութիւնը շարունակում է քաղաքում, մի հատ հաց ձեռք բերելու համար պէտք է ամբողջ երկու ժամ սպասել հացագործի խանութի առաջ, և համարեայ ամեն օր մենք տկոտութեան ենք լինում սոսկալի տեսարանների, օրինակ հացը շուտ ձեռք բերելու

համար միմեանց ծեծել, գլուխ պատել և այլն:

Դարագողի խանրը կրկին սկսել են տանջել ինքն հայ ժողովրդին: Յուսով ենք որ կառավարութիւնը շուտով կարեն միջոցներ ձեռք կառնէ սանձահարելու այդ խաներին և մեր խեղճ ազգը ազատելու տառապանքներից:

Ա. Յ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Վեհ. Մուգաֆթիդգին Զահր այսօր հասել է Զէնդան և լուսնի 24-ին Ն. Կ. Մեծութիւնը պիտի ժամանէ մայրաքաղաք Ն. Մեծ. Սադրագոմը Նաֆտադում (որ 2 մղոն հեռու է քաղաքից) պատրաստել է տալիս մի շքեղ ընդունելութիւն:

Հեռագիրը լուր տւեց որ Ռուսաց Զարի թագադրութեան հանգէսը տարւել է երեկ, ուրեմն մեր ստացած և 16-երորդ համարով յայտնած լուրը (որպէս թէ այդ արարողութիւնը մէկ ամսով յետաձգւել է Զահր մահւան աւթիւ) ճշմարտութիւնից զուրկ է եղել և դա ունեցել է իւր յարգելի պատճառը, որ մենք չենք կարող յայտնել մեզանից անկախ պատճառներով:

Անցեալ կիրակի Ս. Գէորգ եկեղեցում կայացաւ մի ընդհանուր ժողով: Նախագահում էր Ալվատեան հայրը իսկ ժողովը կառավարում էր Յովհաննէս խան Մատէհեանը քարտուղարի պաշտօնը վարում էր պ. Արսէն Մարգարեանը: Օրակարգն էր նախ Վեհ. Զահր ընդ առաջ գնալու համար մի մասնախումբ ընտրելն որի պաշտօնը կը լինի այդ մասին մի կարգադրութիւն անել: Միաձայնութեամբ ընդունեցաւ, որ յանձնարումը կողմի «էստաֆական» սիւսետով, այսինքն իւրաքանչիւր դասակարգ իւր ներկայացուցիչն ունենալ: Պարոն Մաթէս Գրիգորեանը առաջարկեց, որ անհրաժեշտ է մամուլն էլ իւր ներկայացուցիչն ունենալ նրանց մէջ: Զայնի առաւելութեամբ ընդունեց այդ առաջարկը որով քաղաքիս երկու թերթերն էլ իրենց ներկայացուցիչը պիտի ունենան այդ ժողովում: Եւ պիտի ընտրութեան ենթարկեցաւ երկրորդ մի կարեւոր հարց: Ասող-Արեւելեանի նախորդ թիւով յայտնած էինք որպէս որ Թէհրանի հայ հասարակութիւնը ցանկանում է կողմել մի «Որոշ ազգային ժողով» որի պաշտօնը լինի կետրոնացներ ազգային բոլոր գործերի բաժան բաժան գործառնութիւնը և նրա տն-միջական հսկողութեանը յանձնել ազգային ելծմտական, ուսումնական, կրօնական, տնտեսական խնդիրները երբեմն էլ այդ ժողովը կը լինի նաեւ մի հաշտարար տեսան ազգայնոց մէջ եղած մտեր մուշտ մէջքը կարգի դնելու: Այնեւէ է, որ այդքան գեղեցիկ մի նպատակ չէր կարող ժողովականների կողմից ընտրութեամբ չընդունելու: Եւ կային լինելով մի ծանր և պատմութեամբ զարմ տեղի տու բազմաթիւ փնտրանութեանց, այնպէս որ ժամանակը անգագալի կերպով անցաւ: Եւ այն մի շոշափելի եղբայրացութեան հանգելու: Ժողովը կանգ առաւ այն կէտին որ պէտք է ընտրել մի յանձնաժողով ծրագրի ուր-

ւագիծը պատրաստելու համար, բայց ժամանակը ուշ լինելով որոշեցաւ զալ կերակէ նորէն ժողովի գումարել, Թէհրանի հայ հասարակութիւնը, որպէս զի ընտրեն յանձնաժողովը: Երբոր նման օրինակ ժողովրդային կենսական հարցեր զբաղում են հասարակային սեղանի վրայ նրան (հասարակութեանը) մնում է աւելի բարեխղճաբար, եռանդով, անկեղծութեամբ և լրջութեամբ վերաբերւել դէպի այդ հարցը, պէտք է պատրաստել, պէտք է եփել, պէտք է բազմաթիւ քննութիւններից անցկացնել և այսպիսով վճիռ տալ և դրա համար հարկաւոր է միջոց:

Մենք ևս գտնուելով այդպիսի պատահանտու պարտքերի առաջ, ստիպւած ենք խնդրել ժամանակ, միջոց, որպէսզի կարողանանք աւելի ուսումնասիրւած և սրբագրւած (retouché) հայեացքներ դնել նրա առաջ: Առայժմ Ասող-Արեւելեանի խմբագրութիւնը խնդրում է յարգելի հասարակութիւնից, որ անպատճառ ներկայ գանձի ընդհանուր ժողովներին: Թող ամեն ոք լաւ հասկանայ իւր իրաւունքը և ի ստիպել յարգին պաշտպանէ նրան: Ներկայ եղողները իրաւունք ունեն խօսելու վիճելու իրենց գալափորները արտայայտելու (անշուշտ կանոնադրութեամբ) ոչ թէ միայն աբձանների պէս լուռ ու մունջ նստած մտիկ տալու ինչպէս անցանկերում պատահել է: Նաեւ անհրաժեշտ է իմանալ, որ ծրագիր կազմելու համար պէտք է ընտրել այնպիսի մարդիկ, որոնք ծանօթ լինեն սահմանադրական օրէններին և յոյս ունենան, որ դատակարարին (էստաֆական) հարցը այդ գէպըւմ արծարծելու կարիք չի լինել: Արդհեա, ենթադրենք թէ կոշկակարների դատակարար ուզում է ընտրել մի ներկայացուցիչ իւր կողմից, թող իրենք կոշկակարները վկայեն կալ իրանց մէջ գտնէ մի մարդ, որ գէթ հասկանալ այդ ժողովի տարբական սիւղբունքները նոյնն էլ կտանք հիւսնի, գերծակի, ոսկերչի, գինեվաճառի և այլն իսկ վաճառական դատակարարի համար: Ուրեմն հարկաւոր են մեզ այդ պարծին հմուտ մարդիկ որոնք միայն պատկանում են այն դատակարարին, որ գրականութեամբ է գրաււած:

Թէհրանի հայահեաց ընկերութեան օրիորդաց զայրոցի քննութիւններն առաջիկայ հինգշաբթի օրը կսկսին: Եւ անկողութիւնն է ստիպում շուտով սկսել արձակուրդը: Առթիւ օգուտ քաղելով հայահեաց ընկերութեան ուշադրութիւնն ենք հրաւիրում այդ տնայարմար որջի վրայ, թէ և րոնկութեան պատճառներն էլ յարգելի են, այդ չենք ուրանում: Բայց այն էլ պէտք է ի նկատի ունենալ, որ Ֆիզիքականը չը պէտք է զոհել մտաւորականին:

Հայահեաց ընկերութեան յայտնում է իւր անդամակալ հիներին և աշակերտահեաց ծնողներին որ հինգշաբթի Մայիս 16-ին օրիորդաց վարժարանում քննութիւն պիտի կատարւի: Նաեւ այդ առթիւ օգուտելով վարժարանի սրահում ի ցոյց է դրւած Արարատականի հայոց պատգամաւոր, Մեծ. պ. Արարատ Մեղիք Բերահամանցի բերած ընծան հասարակ Զահր թագադրութեան լիւսնամեակի համար:

Հաստատ աղբիւրներից լուր ենք ստացել, որ Դավրիժի հոգաբարձութիւնը դիմել է Էջմիածին Սահման Արք եպիսկոպոսին, որ վերջինս համոզէ պ. Թորէղոսով Միսի. Պետրոսեանին (պարոնը երկար տարիներ աշխատել քարեխղճութեամբ ծառայել է Դավրիժի Արամեան դպրոցին) որ վերադառնայ իւր ծննդավայրը և կրկին յանձն առնէ ուսուցչական աշխատանք, որ ծանօթ ենք այն հանգամանքի հետ, որ տոնիք տեղ Պ. Թորէղոսովին հեռանալ Դավրիժից, չենք կարող մեր ուրախութիւնը չը յայտնել այդ առթիւ: Մենք յոյս ունենք որ հոգաբարձութիւնը կը յարգէ և պարոնի իրաւացի պահանջը, որն է Արամեան դպրոցը մաքրել ազատ գրաշարներից և տնտեսականներից:

Դավրիժի հայերը Սարաճեան հօր հետ ներկայացել են Վեհ. Զահրն և Վեհափառի կողմից լաւ ընդունելութիւն են գտել: Հայերը ներկայացրել են նաեւ մի ոսկի է սկստող (մէջմահի) թէյի համար: 1745-ին Արամեան դպրոցի աշակերտներն Բաղը--Շումալում ներկայացել են Վեհափառին և մի պարսկերէն երգ են երգել, շատ լաւ տնտեսութիւն է արել:

Արդարեւ, Դարադադում խոռովութիւններ կան: Քիւրտերը յարձակւել են Սարաճեանի Մահում գիւղի վրայ և տարել գիւղի նախնիք, բայց գիւղացիք յետ են դարձրել աւարը, իսկ Սարաճեանը գիւղացիներին տուգանքի է ենթարկել առարկելով: Թէ դուք «Լազաղներ» (փախստական) էք պահում ևս այդ ձեր քաջութիւնը չէ (խնդրեալ հայեր, ձեր քաջութիւնն էլ է կասկածի ենթարկւել) պա մասին Թէհրանի ձեռնապա մարդկանց ուշադրութիւնն ենք հրաւիրում:

ՀՐԱՏԱՐԱՐԻՉ
Ասող-Արեւելեան Ընկերութիւն
ԱՐՏՈՒՆՏԵՐ
Մակար Կ. Մակարեանց

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վարժաւ համար պատրաստ երկու նոր խանութ ջահանգիրի (շեմլան) դիմել խմբագրութեան:

Ազգային մարմնայ կազմութեան ծրագիրը պատրաստող մի յանձնարարութեամբ ընտրելու համար կը հրաւիրուին ժողովարարութիւն հայ ժողովուրդն յանաջիկայ կիրակէ օրը Մայիսի 19 առաւօտ ժամ 10--կիսին ներկայ գտնուիլ: Հայ հասարակական ժողովին որ տնտեսական մեր փոխանորդարանի Արարատ Ս. Գէորգ եկեղեցին: Ատեանը կը բացուի ճիշտ որոշուած ժամին:

Առաջն. Տեղ. Պարսկաստանի և Հնդկաստանի
Ս. Տ. Վր. Ալվատեան

Թէհրան. Զաւա-Հայ Տպարան